

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մատենաիս մէջ ամփոփուած Մխիթարեան Միաբանութեանս ղիւսնական վաւերագրերուն առաջին մասն սկսաւ նախ հրատարակուիլ *Բազմավէպի* մէջ<sup>1</sup> . յետոյ առանձին պրակներ հանուեցան՝ միանգամայն ամփոփ հատոր մը կազմելու ղիտաւորութեամբ ի ղիւրութիւն ընդհանուր ուսումնասիրաց եւ ի գոհացումն փափագողաց :

1926 թուականէն առիւն՝ այլ եւս լաւագոյն համարեցինք շարունակութիւնը ուղղակի տպագրել, ինչ որ դժբախտաբար ընդհատուեցաւ ունեցաւ ստիպողական գործերու պատճառաւ . եւ այսպէս՝ հրատարակութեանս լրումը վիճակեցաւ այս տարուան :

Գործիս կազմութեան ու նպատակին շուրջ կարելոր կը համարինք կարգ մը բացատրութիւններ տալ :

ա. «ՄԱՅՐ ԳԻՒԱՆ» իս թղթերը կը ներկայանան Հայ Բանասիրութեան՝ սկսեալ 1707-է մինչեւ 1773: Յայսպայր եղած ժամանակամիջոցը Մխիթարեան Միաբանութեանս պատմութեան մէջ առանձին շրջան մը նկատելով՝ յարմար դատուեցաւ ուրոյն հատոր մը կազմել :

բ. Գիւսնական վաւերածրութիւններէն – որոնք թուականներու կարգաւ Մայրավանքիս Գիւսնատան մէջ առանձին տուփերու մէջ էին – առած ենք *մի միայն* հայերէն գրուածները, որովհետեւ մեր սկզբնական նպատակն էր ծանօթացնել *Բազմավէպի* ընթերցողաց՝ երբ անոր խմբագրութեամբ կը զբաղէինք: Հետեւաբար հրատարակութենէս դուրս կը մնան այլալեզու վաւերածրութիւններ, որոնք սակայն օրին մէկը՝ ընտրանօք՝ կրնան ուրիշ շատ կարելոր հաւաքածոյ մը կազմել միեւնոյն կամ մերինէն լաւագոյն ծրագրով եւ ուղղութեամբ :

գ. Իւրաքանչիւր վաւերագրէ առած ենք մի միայն ազգային եւ օտար ղէպքերու եւ տեղեկութիւններու վերաբերեալ մասերը, որոնք միջազգային՝ եւ մասնաւորապէս՝ ժամանակակից հայ քաղաքական վիճակի, եկեղեցական պատմութեան, ծէսի, սովորոյթի եւ մտաւորական կեանքի շուրջ կու տան կամ նոր մանրամասնութիւններ, եւ կամ են նոյն իսկ իբր նախանիւծ կամ աղբիւրներ, ցարդ եղածներուն վրայ նորութիւններ աւելցնելուն համար: Աստի կ'իմացուի ինքնին ամփոփուած վաւերագրերուն ստոյգ արժանիքը :

դ. Չանց ըրած ենք հրատարակել ընկերային եւ առտնին պարզ թղթակցութիւններ, ինչպէս նաեւ այն ամէն մասեր՝ որոց հրատարակութիւնը կրնայ այսօր իսկ կարգ մը վէճերու աւելորդ պատճառ տալ եւ թգուտէ աւելի վնասակար դառնալ :

ե. Հրատարակուած թուղթերուն մէջ կը բացակային Ուխտիս Հեղինակ Երանաշնորհ Մխիթար Արքաիօր կողմանէ գրուած նամակները, մեր վաւերածրութիւնները պարունակող տուփերուն մաս չկազմելուն համար :

զ. Իւրաքանչիւր վաւերագրի ուղղագրութիւնը պահած ենք ինչպէս որ է . բայց հարկադրուած ենք երբեմն նոտրագիր նշանակել տառ մը կամ բառ մը՝ ծանուցանելու

1. Տես 1921 Գեկա .